



ՀԱՅԲԱՐԱՅԻՆ

ԱՐԱՐԱՅԻՆ

ԵՐՐՈՐԴ ՏՄՐԻ


ԹԻԻ 96

24 ՄԱՅԻՍ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի 24 Մայիս 1913 Թիւ 96

«Մերական Բանաստեղծական Պոռն ժ. կր մադրէ որ Կարողիկէ Աւանդական շաբաթաբերը շաբաթական Լայտասանի կարողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մադթանաց արդիւնաւորութեան համար Մերական Լայնն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարդ. Մէրի Տէլ Վայի, առ Ալիմ. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեան, Լայ Կարողիկէ Պատրիարք Կիլիկիոյ, 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտանաւաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅԵՐ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆԱՆՈՍ

Ամբողջ Կաթողիկէ տիեզերք այս օրերս ջնձագին կը տօնէ Գրիստոնէութեան ազատութեան վեչտասաններորդ դարադարձը. Ո՛չ միայն կրօնքի, այլ և բովանդակ մարդկութեան ու անոր քաղաքակրթութեան համար առաջնակարգ կարեւորութիւն ունեցող անմոռանալի դէպք մը եղաւ Միլանի կայսերական Հրովարտակը յամին 313. Ս. Եկեղեցին որ երեք դար իր արեամբ ներկուած ու գաղանի աղօթած էր, եղաւ գեոնադամբաններէն. և իր լոյսն ու կենդանացունցիլ օրէնքները սփռեց ի սփիւռս աշխարհի. և ապականեալ աշխարհ վերանորոգուեցաւ, և

բարբարոս ազգեր ընտելացած՝ խմբուեցան Ս. Խաչի փրկարար Դրօշին ներքեւ. Կոստանդիանոս Մեծի՝ Հռոմէական Կայսեր գրչին մէկ հարուածը գործեց այս հրաշալիքը. սակայն այդ ստորագրող վեհափառ աջը, Խաչեցելոյն Բարձրեալ Աջովը շարժեցաւ. Աջ ին՝ Տէ՛ր, արար զօրութիւն. Խաչով յաղթանակեց Կոստանդիանոս. Խաչը փրկեց Ս. Եկեղեցին:

Արդարութեան արեւը սակայն Արեւելքէն ծագած էր. Արեւմուտքն եղաւ ուրեմն այս անգամ նախաձեռնարկ, անկէ՞ ծագեցաւ լոյսը, առաջնութեան պատիւը Արեւմուտքը խեց... Պանծանօք կ'ըսէ Լայը. Ո՛չ. և պատմութիւնը կը վկայէ անոր ճշմարտաստութեան՝ իր բազմադարեան արձագանգովը:

Լայ պատմութեան ոսկեղէն մէկ էջն է որ պիտի բանանք և անոր համառօտ խոկումովը պիտի զմայլինք. Արեւելքին է. Լայոց է առաջնութեան պատիւը. անլուր մեծագոր-

ծութիւն մըն է զոր Աստուած կատարած էր ի Հայո, մեծագործութիւն ա'յնքան նշանաւոր՝ Արեւելքի համար, ո'րքան Միլանու Հրովարտակը՝ աշխարհիս համար:

Հայաստան աշխարհ, ազնիւ՝ իր հնութեամբ, կորովի և մտացի ցեղովը, երկրին հրաշալի գեղեցկութեամբը. Հայաստան աշխարհ՝ որ լսած էր Դրախտին սոխակը, նրկատած՝ նոյեան ձիւնաթոյր աղաւնին, սարսած՝ ասքանազեանց ուղղուած մարգարէական ձայնէն, երեք դարէ ի վեր Գրիստոսի աւետիսն ալ լսած, բայց առ հասարակ քամահրելով, կը նստէր ի խաւարիեւ ի ստուերս մահու, Հայաստան աշխարհ յանկարծ քրիստոնեայ եղաւ. ամբողջ ազգ մը, միլիոններով. ազգ մը՝ խրոխտ, պատերազմիկ, զարհուրելի, ու, աշխարհագրականօրէն քաղաքակիրթ և բարբարոս աշխարհի մէջտեղ կեցած, երկուքէն ալ կ'ազդուէր. մերթ յադմերթ պարտուած. մերթ ոխերիմ, մերթ գաշնակից:

Սակայն գլխաւորաբար ոխերիմ էր Աքեմենեան և Սասանեան հարստութիւններուն, որ պարսիկ լուծին տակ կ'ուզէին ընկճել Հայը, ու կրակի երկրպագու ընել զայն: Հայը աւանդական թշնամի եղաւ Պարսիկին, պահպանելու համար՝ իր անկախութիւնը, իր գոյութիւնը: Սակայն երրորդ դարու վերջին կէսէն անդին, թշնամութիւնը զայրացած, գազաթնակէտին հանած էր: Դոռոզ Սասանեանը՝ որ խոստովու սուրին փայլատակներովը թաւալած էր գետնամած, դաւաճանեց. այս ահաւոր արքան նենգութեամբ սպաննել տուաւ (չուրջ 253ին): Այնուհետեւ կամաց կամաց տիրեց երկրին, իբրեւ զգուելի պողիպոզ մը անագորոյն, երկրին կենսականութիւնը ծծելով ցմահ: Անմեղ արիւնի հեղման և ոգեսպառ հառաչանաց տարիներ ծանրացան հայ հայրենեաց վրայ: Անճիտութիւն մահազանգը կը հնչէր:

Սակայն Հռովմէական ազատարար արծիւը սաւառնեցաւ դէպ ի Հայաստան: Տըրդատ արքայ՝ միւս և քաջարի, Հռովմայ հովանւոյն ներքեւ քալեց, և իր առջեւէն մահախուղի պէս քաշուեցաւ սեւաթորմի պար-

սիկը, քաշուեցաւ իր պատուաւններով, շնջրիններով, մողէզներով և խառնափնթոր բազմաճճիներով. իր երկրպագած կրակէն այրելով. և իր պիղծ ատուշանները մարեցան ու միացին իրենց վերջին պիղծ շունչը:

Բայց Հայաստան կռապաշտ էր, և Տըրդատ կռապաշտ էր, և իր պաշտպանն Դիոկղետիանոս կռապաշտ էր: Երրորդ դարուն վերջերն էր: Աննչան մարդ մը կանդնեցաւ Տըրդատայ՝ դիւցազն, փառահեղ, մշտայաղթ թագաւորին առջեւ, և անարգեց անոր երկրպագած տապաւորի կռքերը, և զԳրիստոս խոստովանեցաւ Որդի Աստուծոյ: Կատկեցաւ, գազանացաւ Տըրդատ. իր հօր խոստովու և Հռովմէական կայսերաց Գրիստոնեատեցութիւնը իր երակներուն մէջ թափանցած էր. անարգ և խոտելի և տէրութեան փաստակար էր այդ կրօնը Տըրդատայ տեսութեամբ և հեթանոս փիլիսոփայութեամբ: Ետաց ուրիմ անոր երիտասարդ անպուսպ արիւնը. և իր պաշտած դից վրէժը լուծելու համար այդ աննչան մարդուն՝ որու անունն էր Գրիգոր և որու հայրն Անակը եղած էր՝ սպաննող Տըրդատայ հօր՝ խոստովու, այդ անխնայ տահմ մարդուն արիւնը քամեց, անլուր ու սարսաղեղեղիկ չարչարանքներով, զինքը յուրացութիւն եւ ի վարձատրութիւն յորդորելով: Բայց այս աննչանը քաջատոնմիկ էր ի Գրիստոս, և Դոկղոթայի արիւնով մլխուած պողովատիկ մըն էր Բանին Աստուծոյ: Չսասանեցաւ նա, ո'չ եկեղեցական տարեգրոց մէջ նման չունեցող միահամուռ և երկայնժամանակեայ դիւանար տանջանքներէն, ո'չ խոր-Վիրապի մութէն ու զեռուններէն: Պարտուեցաւ, պառփուեցաւ թագաւորը: Եւ իր սպաննած Հռովմէական նժգեհ Հոփսիմեան կուսանաց բարեխօսութեամբ, իր նազելի քոյրը խոստովիդուխտ աւետարել տեսելեամբ իր թմբիրը թօթափելով, Արտաշատ զրկեց իր դայեակն ու ազատարարն Օտա Ամատունին, որ կենսապարգեւ Գրիգորը հարուստ տարիներ վերջը կենդանի վերածեցին մահացու գուրէն: Հայաստանի նոր արեւն էր որ կը ծագէր բազմադարեան գիշերուան խորերէն, և ցնծալից առաւօտ մը կը բերէր Ք

ստուերս մահու խարխափող հայ ազգին : Թօթուեց անոր մահահրաւէր քունը . իր կենսատու ճառագայթներովը ողողեց այրարատեան հայրենիքը : Բժշկեց թագաւորը , փառազարդ վկայարաններու մէջ հանգոյց նահատակուած սրբասուն կոյսերուն երկնաբոյր մարմինները . հրահանգեց ամբողջ ազգը . եւ երկնաւոր տեսիլքով միայն իր խոնարհութիւնը յաղթուելով՝ Աստուծոյ յայտնուած կամբին առջեւ , Կեսարիոյ Ղեւոնդիոս Հայրապետէն եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունեցաւ եւ վերադարձաւ սրբոց նշխարներով , ի փախուստ խուճապեց անզգամ դեւերը . հիմնայատակ քանդեց Վահագնի , Անահտայ , Աստղկան եւ այլ դից մեհեանները . մկրտեց զիւցազն արքան Տրդատը , Աշխէն Տիկնաց Տիկինը , Սոսրովիւդուխտ Կոյսը , ամբողջ նախարարները , աւագորեալը , միլիոնաւոր ժողովուրդ , եւ երկու հարիւրէ աւելի եպիսկոպոսներու եւ անթիւ քահանաներու ձեռքով քրիստոնեայ ըրաւ Հայաստանը :

Եկեղեցական պատմութեան միակ դէպքն է այդ . հրաշալիք մը ըստ ինքեան : Քրիստոնեայ Եկեղեցին Գրիգորի ձեռքով եւ Տրդատայ օժանդակութեամբ մէկէն ծնաւ եւ զարգացաւ Հայոց մէջ , առոյգ , ազատ , բարեկարգ ու բազմաբեղուն : Արեւը ծագած էր Արեւելքէն :

Սակայն Արեւմուտքէն մեծ աւետիս մը բերին զեփիւլեւներն ի Հայաստան : Հռովմայեցւոց ինքնակալը Կոստանդիանոս քրիստոնեայ եղած եւ Եկեղեցւոյն ազատութիւն չընորհած էր : Հռովմայ կայսերք շարունակ հալածեր էին Քրիստոնէութիւնը : Անառակութեան եւ կռապաշտութեան ձեռքը մատնուած , նորածիլ քրիստոնեայ բոյսը ուզած էին ճիւղակոտոր արմատախիլ կորսնցնել . երեք դար շարունակ հռովմէական տանջանքներով խոչտանգած էին ժողովուրդը որ ուրանայ . մահաւանդ մի քանի կայսերք , ինչպէս Ներոն , Դոմիտիանոս , Դեկոս եւն . , անլուր խժգոնութիւններ ի գործ դրած էին , այդ ցեղը անճիւղաւ մտքով . բայց ան՝ ընդհակառակն , կ'երթար ու կ'աճէր քահագին համամատու-

թիւններով եւ լեցուցած էր աւանները , քաղաքները , բանակները , մինչեւ իսկ կայսերական պալատը : Զարհուրեցաւ Դիոկղետիանոս եւ իր կամակից Մաքսիմիանոսի եւ Գաղերիոսի հետ զարհուրելի հալածանքով մը երգուընցաւ աշխարհիս երեսէն ջնջել Քրիստոնէութիւնը , եւ այս յաղթանակը իբրեւ հաւատարած , յիշատակարան կոթող կը տնկէր Նիկովիոյի իր մայրաքաղաքին մէջ : Այս երգման եւ կոթողին վաղորդայնին էր որ Հռովմէական պետութեան պաշտօնական կրօնքը դարձաւ Քրիստոնէութիւնը : Մաքսիմիանոս երկիցս ուխտաւորուծ , խեղճամահ պատժուեցաւ . Գաղերիոս որդնալից սատակեցաւ . Դիոկղետիանոս սրտին ցաւէն մեռաւ թագազուրկ : Իսկ Մաքսենտիոս յափշտակիչը , անառակ , անագորոյն եւ զազանաբարոյ , յիմարաբար մտաբերեց ընդ բռամբ ածել ամբողջ արեւմուտքը , ուր կը տիրէր կորիւն առիւծու՝ Կոստանդիանոս : Սա վայրկեան չկորսնցուց . թէեւ տկար բանակով , սակայն շտապեց քաղեց թշնամւոյն վրայ : Տեսած էր արեւուն վերել խաչը ճառագայթարձակ , սա մակագրութեամբ : Այսու յաղթեալ՝ Սալանիչ Լապարոնի հովանւոյն ներքեւ խոյացաւ արծիւի պէս , Ալպեան լեռներու վրայէն իջաւ Իտալիա եւ յաղթութիւնէ ի յաղթութիւն վաղելով , Հռոմայ մօտ Միլվեան կամուրջին քով ջախջախեց թշնամին , որ պետամոյն կորաւ Տիբերիսի պղտոր ալիքներուն մէջ : Կոստանդիանոս՝ Լիկինիոսի հետ միահեծան տիրեց հռովմական աշխարհի վրայ , քրիստոնեայ եւ բարեպաշտօն եւ յարգադիր մեծի Քահանայապետի :

Այս ամէնը լսեց Տրդատ եւ չկրցաւ զսպել ուրախութիւնը , Հին յիշատակներ , երիտասարդութեան քաղցր յիշատակներ արթնցան իր սրտին մէջ : Այս բարեբախտ կայսրը , որդի հեզահոգի Կոստանդոսի Քլորոսի , ժամանակաւ ընկեր եւ բախտակից էր Տրդատայ , զոր Արտաւազդ Մանգակունի փրկած էր Սասանեան Արտաշրի հրամայած արքայազուն Պայազատաց կոտորածէն եւ փախցուցած առ կայսր , ինչպէս Օտա Սոսրովիւդուխտի հետ զիմած էր յամուրն Անի : Տրդատ եւ Կոստան-

դիանոս Դիոկղետիանոսի պալատին պերճու-
թեանց մէջ զիրար ճանչցած էին. մին դա-
ւով իր հայրը եւ զահր կորուսած նոթի մըն
էր՝ Հռոմայ մարդասիրութեան ապաւինած և
Լիկինիոսի — Գաղերիոս Աւգոստոսի բարե-
կամին, — խնամոց յանձնուած, որուն ձեռ-
քին տակ հրահանգուեցաւ ի մարգս փիլիսո-
փայութեան ու պատերազմի. միւսը կասկա-
ծոտ Գաղերիոսի ճիրաններուն մէջ իբրեւ
պատանդ կը հեծէր. ան ժամանակ երկու
պատանիները թէեւ ոչ հասակակից, սերտ
մտերիմ ու մխիթարակից եղած էին իրարու,
իրարու առաքինութեան, քաջութեան, ան-
խորտակելի նկարագրին հիացած էին. այդ
երկու հուժկու բազուկները Զօրութեանց Տի-
րոջ Կամքին կատարման համար հրաշալիք-
ներ պիտի գործէին. Երբ Տրդատ Հռոմէական
լէգէոններով և արքայական թագ կապած,
ուղեւորեցաւ իր հայրենական երկիրը, (ի
վերջ կոյս Գ. դարու), արտասուելից ողջա-
գուրուած էր նա Կոստանդիանոսի հետ, որ
ապա դիւցազնական ձեռնարկով մը արիւն-
ոռւշտ գաղանին ձեռքէն փախաւ ու իր հօր
քով երթալով անոր պայազատեց (306).
Տրդատայ յիշատակները խռովեցին յուզեցին
իր սիրտը. և իր հին բարեկամը և այժմեան
քրիստոնեայ ինքնակալը ուզեց կրկին սեղ-
միլ իր բարեկամի կրծոց վրայ և ըստ Առա-
քելոյն, մխիթարակից ըլլալ միմիանց, սուրբ
հաւատքի մէջ ալ միացած ըլլալուն համար.
(Շարունակելի)

ՄԱՂՆՈՒՊ ԻԹՏԻՆ!...

Բարիդին, ըստականա գարշը օլան եա-
հուտի զաղէթալարընըն էն մէնֆուրընտա տէրճ
օլունմագ իւզրէ, պիր մէգալէ եազմը պի-
թիրմիշտի:

Թէքրար թէքրար մէգալէսինի կէօզտէն
կէչիրտիքտէն սօնրա, քէնտի քէնտինէ չու
սուրէթլէ սէօյլէնիօրտը. — Իշթէ պու բէք
միւքէմիշլ տիր, էօմրիւմտէ էյի պիր շէյ եաբ-
արմա օ տա պու տրր. չիւնքի պու մէգա-

լէմլէ իսպաթ իտիօրում քի, արթըզ մէգհէպ
հալը իհիթիգարտա պուլունույօր, ճան չէքի-
չիօր... ըստական թարաֆուարլարը մահւլ օլ-
տուլար... խոտովանանք, մօտասը կէչմիշ
պիր պուտալալըզ տրր. հէր քէս թարաֆըն-
տան թէքք օլունմուշ տրր... Հաղորդու-
թիւնա ինանան պիր ֆէրտ պիլէ գալմամը
տրր...:

Պիպիմ կազէթաճը եարտըղընտան ֆէվզ էլ
ատէ մէմնուն, էլլէրինի օլալայրու տուր-
յօրտը:

Սօնրա գալէմինի էլինէ ալարագ «Ի՛ն-
ֆուր ըստական ֆիքիրլիլիք, իշթէ մահիւ-
միլէթինին գարտընը իմզա էտիօրում» տէր,
վէ սօն սահիֆէնին զիլլինէ իմզատընը վազ
էլլէր:

Հէր վազըթ աշի ֆիքիրլէ ուղրաշան
քիմսէ, քէնտի թաաավլուրլարընը չօգ տէ-
ֆա ֆիլիթեթ զանն էյլէտիլի իշիւն, պիպիմ
մուհարրի տէ, ատէթա թէչէպպիւսի միւ-
վէֆֆադիլէթլէ նէթիճէլէնմիշ կիպի մէսուր
օլույօր, գաթօլիքլիլին խարապընը պէր վէճ-
հի բիշին կէօրիւյօր... Թէք պիր տանէ գալ-
մըշ օլան ըստականըն տար աղանընտան ա-
սըլտըղընը վէ տիւնեանըն հէր թարաֆընա
եահուտիլիք հիւքմ իտիօր օլտուղընը սէյր
էյլէյօր կիպի մէմնուն կէօրիւնիւյօրտը...:
— Պու նէ՛ ուլվի ֆիքր, պու նէ՛ մուզաֆ-
ֆարիլէթ, նէ՛ մէսէրրէթ, նէ՛ հուրրիլէթ...
Եա պունըն պաշ միւրէվվիճէրինտէն պիրի
տէ, պէն օլմագըղըմ նէ՛ գատար պաթի
մէֆիլէթ տիր, — տէյօրտը:

* *

Պու խիւլեալէր արասընտա մուհարրիին
պաշը գըզմըշ, գալպի, աթէշի զայրէթլէ
թուլուշմուշ օլտուղընտան, պիր աղանդ
թէնէֆֆիւնէ իհիթյաճ հիսս իտիօրտը. Շար-
գասընը վէ պասթօնընը ալարագ մէգալէսինի
թէպիմ իթմէք իւզրէ եօլա չըգար:

Մէվսիմին գըշ վէ կիճէնին սաաթ տօ-
գուզը օլմասընա յաղմիշ, Բարիդ սօգապլա-
ընտա զարիպ պիր հալ նիւմանան օլմագ-
տայտը. իշ ատէմլէրի քէսըթլէ էօթէյէ պէ-

րիյէ կիտիպ կէլլօրլարտը, տիւքեանլարտա տա միւշթէրի չօգտը:

— Վա՛յ, հիշ տիւշիւնմէտիմ, պու կիւն Դեկտ. 24 տիր, Գաթօլիքլէրին կիճէ քիլի-սայա կիթմէք իւզրէ գալգաղլարը կիւն տիր,— տէր մուհարրիւր, վէ պու կիտիպ կէ-լէն բարիպլիւրի սէյր իթմէք իւզրէ քէյֆլիճէ եօլունը սէվամ իտէր: Սէն-Սիւլբիս մէյտա-նրնա եէթիշիր: Էհալի քիլիսանըն մուհիպ մէրտիվէնինտէն էնիյօր չըգըյօր:

Մուհարրիւր մէրագա կէլիր,— ճանըմ չու իշէրիտէ նէ օլույօր, պագալըմ,— տէյէրէք Գիլիսայա կիրէր:

Պիր գաշ խաթվէ ալըր ալմազ կէօրիւր քի, խոստովանարանլարըն էօնիւնտէ սըրա իլէ տիգլիմիշ բէք չօգ ատամլար վար: Արա սըրա խոստովանարանտա տիգ չէօքմիւշ օ-լան պիր ատամ չըգըյօր, ծոռն եէրինէ պիր տիկէրի կիրիյօր, սըրա պէքլէյէնլէր պիրէր սանտալիա իլէրի կիտիյօր վէ պու սուրէթլէ ծնլարըն գէնճիւրի հիշ գըսալմայօրտը: Պէք-լէյէնլէր եալընըզ գարըլար տէյիլտի, հէր չադտան, գէնիկին, էմնաֆ բէք չօգ տա էր-քէք պուլունուեօրտը:

Մուհարրիւր հէր նէ գատար տա հէր կիւն Գաթօլիքլէր վէ գաթօլիքլիք հագգընտա մէ-գալէլէր եազարտը իսէ տէ, Գաթօլիք ու-սուլլարընա բէք ազ վազըֆ իտի, պինաէն ալէյի քէնտի քէնտինէ:— ճանըմ, չու ահ-մազլար՝ օ գարանլըզ քիւչէտէ նէ՞ եաբըյօր-լար, օլմայա քի խոստովանանք օլույօրլար: Տուր չու կէչէն լուսարարա սօրայըմ, պագա-լըմ նէ՛ տէյէճէք:

— Աֆվ իտէրսինիզ, էֆէնտի, չուրատա օթուրանլար նէ՞ հաբըյօրլար:

— Պունը անլամայաճագ նէ՞ վար. իշթէ խոստովանանք օլույօրլար:

— Հը՛ն, նէ՞ տէրսինիզ: Տահա խոստո-վանանք օլան վարմըյըմը:

— Տահա, տէմէքլէ վագթըն կէճ օլտու-ղընը անլայօրսանըզ, էվվէթ, վագըթ կէճ տիր. ֆագաթ Մնուկէ կիճէլէրի պէօյլէ օ-լուր: Քահանալար եարը կէճէյէ գատար խոս-տովանանք իշիտիրլէր: Սիւլտէ սըրայա կիր-

մէք իսթէրսէնիզ, էմին օլուն քի սըրա պու-լապիլէճէքսինիզ:

— Տէմէք քի, եարը կէճէյէ գատար է-հալի պուլունուր:

— Թապիի. վէ եարըն սապահ գաբուլար աշըլտըղընտա պաշգալարը կէլիրլէր:

— Խոստովանանք մը:

— Էվվէթ. ամմա պունըն նէսինէ թէ-աճճիւպ իտիյօրսըն:

— Պէն գանն իտիյօրտըմ քի, արթըզ խոս-տովանանք ալէմտէն գալգմըշ տըր:

Լուսարար գարչըսընտաքինին նէ մախ-լուզ օլտուղընը անլայարագ, չու եօլտա տէ-վամ իտէր:

— Սիւլտէ, դազէթալարըն հէր տէտիյինէ ինանանլարտանսընըզ, ֆագաթ գօրգմայըն, դազէթալարըն օթարզ եանլըշ եուվարլազ մէգալէլէրի ինանանլարը Ալլահտան վազ կէ-չիրէմէզլէր:

Լուսարար պունլարը սէօյլէտիքտէն սօնրա չէքիլիր կիտէր, մուհարրիւր իսէ, խոստովա-նարանըն էթրաֆընտա օթուրմուշ դայէթ ճիտտի պիր հալտէ վիճտանլարընը թէֆթիշ իտէնլէրի սէյր իթմէյէ տալար, վէ քէնտի քէնտինէ:

— Եա պէն թամմ պունըն զըտտընը եազ-մըչըմ... Պէն, արթըզ հիշ խոստովանանք օլան եօզ տըր տէմիշիմ, հալպուքի... Յա-գաթ շիմտի օթուրուպ տա ճէպիմտէքի մէ-գալէյի թասհիհ իթմէյէ հաճէթ եօզ տըր, գարիլէրիմ պէնիմ սէօզիւմէ իթիմատ իտէր-լէր: Հէմ տէ, չայէտ պէն գալգըպ տա ծո-լարա, խոստովանանք օլանլար կէօրտիւմ տէյէճէք օլուրսամ, պանա կիւլէրլէր... Խա՛յր, մէգալէմի օլտուղը կիպի կէօթիւրիւպ դազէթայա թէսլիմ իտէյիմ,— տէր, վէ ա-լէլ աճէլէ Բիլիսատան չըգար:

(Մապասի վար)

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՅԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ԺԳ.

ՎԵՐՋԻՆ ԽՕՍԻ

ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՏԻՊԱՐ ԿԱԹՈՂԻԿԷՑ

Ներանելի Տ. Կոմիտասի Կ. Պոլսոյ Նախավկային՝ մեր այս խոնարհ և շատ թերի կենսագրութիւնը չաւարտած, կ'ուզենք ամփոփ ակնարկ մը նետել անոր սրբական վարուց վրայ, նկատելով զինքը նախանկար օրինակ մէն մի հաւատացեալի, և մանաւանդ Եկեղեցական դասու։ Տէր Կոմիտաս Քահանային փառապանծ նահատակութիւնն ու յաղթանակը, իբրեւ Հայ-Կաթողիկէ Եկեղեցւոյ անդամ և անոր Քահանայ՝ կատարուած է։

Տէր Կոմիտաս Քահանան, ինչպէս կենսագրութեանս սկիզբէն տեսանք, Եկեղեցականութեան կուսակրօն դասուն չէր պատկանէր. և ըստ սովորութեան Արեւելեան Եկեղեցեաց, ամուսնացեալ Կղերէն էր. սակայն իր ամուսինն ալ համեստափալ, կրօնասէր և առաքինութեամբ օժտուած մէկն էր։ Սակայն առանց վարանելու պիտի խոստովանինք, թէ անոր հոգին՝ նոյն իսկ իր ժամանակուան և մեր լուսաւորեալ և զարգացեալ դարու կուսակրօն Եկեղեցականաց հոգին գերազանցեց։ Իբրեւ մարդ մահկանացու, Քէօմիւրճեանց աղնուազան սերունդէ յառաջ եկած, պարծանք էր այն ընտանեաց, և այն ազնուութիւնը չնսեմացուց և ոչ փոքրիկ արատով մը։ Իբրեւ Քրիստոնեայ, ճշմարտութեան նուրբ հետազոտող, որով միաբնակ զիչ ժամանակուան մէջ Հոգւոյն Սրբոյ շնորհաց պայծառ լուսաւորութեամբ բեղմնաւորուած, որոշեց փրկութեան ուղիղ ճանապարհը, անոր հետեւեցաւ միտնգամ ընդ միշտ առանց սայթաքելու։ Իբրեւ Քահանայ և օծեալ Տեառն, ընդօրինակեց Քրիստոսի Որդւոյն Աստուծոյ առաքելութեան նպա-

տակը, «Սկսաւ առնել եւ ուսուցանել» (Գործ. Ա. 1)։ Գործնականապէս Քահանայութեան Վսեմութիւնը իր մէջ ինչպէս կ'ըմբռնէր, այնպէս ալ արտաքին բարքովն ու վարքովը կ'արտայայտէր. իր արտաքին երեւոյթը զինքը տեմնողներուն կը ներշնչէր համեստութեան, խոնարհութիւն, եղբայրսիրութիւն, աստուածապաշտութիւն. ճրագ մին էր որ աշտանակի վրայ դրուած էր. և ոչ ընդ գրուանաւ (Ղուկ. ԺԱ. 33.). աղ էր որ ամենայն ինչ կը համեմէր. (Մատթ. Ե. 13). Հայր էր, որ իւր որդւոցը անդաբար կերակուր կը ջամբէր. (Մատթ. Է. 10). Բժիշկ էր, որ իրեն զիմողներուն հոգեւոր հիւանդութիւնները կը բժշկէր. (Ղկա. Դ. 18). Դասաւոր էր, որ արդարութիւնը կը բաշխէր անաչառութեամբ. (Ղկա. ԺԹ. 22.).

Շէր Կոմիտաս Քահանայն իւր բարձր և Աստուածային կոչման գիտութեանը մէջ յատուկ և եզակի տաղանդ մը ունէր. սէր և աննչ մը անոր վեհութիւնը միշտ պատկանելի և ազդու դիրքի մը մէջ պահելու հաւմար, որով ինչպէս ի մանկութենէ սկսած էր զարգանալ, այսպէս հետզհետէ տարիքը յառաջանալով այդ գիտութիւնը ի կատար հասուցած և նոյն իսկ ամէն գիտութեանց բանալին եղող Ս. Գիրքը իւրացուցած էր և կրնար իրաւամբ կոչուիլ Կենդանի Ս. Գիրք մը (Բ. Տիմ. Դ. 15.). Հետեւաբար իւր Ս. պաշտօնին բերմամբ նա ամպիրներու, Եկեղեցւոյ բնմերու պերճախօս կրկերոնը եղած էր։ Իւր հանրածանօթ անստգտանելի վարքն ու բարքն յարմարելով հրաշալիօրէն իւր քերնէն արտասանուած սուրբ խօսքերուն, կը թափանցէր ունկնդիրներուն սրտին խորիւրդ, զանոնք կը հմայէր, և յԱստուածապաշտութիւն կը յանկուցանէր. և զինքը լսող հարիւրաւորներու մէջ չէր գտնուէր մէկը որ զինքը մօտէն ալ ճանչնալով կարող ըլլար իրեն դէմ ըսել. «Բժիշկ, բժշկեալ՝ զանձն քո»։ Սրդէն՝ ինչպէս գիտենք, նոյն իսկ իր թշնամիները որ այնչափ կատաղաբար առիթներ կը փնտռէին զինք մատնելու կառավարութեան, չկրցան, իւր ներքին կեանքին այնքան հմուտ ըլլալով հանդերձ, արատ

մը, նշանաւոր թերութիւն մը գտնալ որուն վրայ հիմնէին իրենց զրպարտութեանց շէնքը: Նա առանձնաշնորհալ սակաւաթիւ հոգիներէն մին էր, որ իւր ծայրագոյն խոնարհութեամբը, քաղցրահամբոյր հեղութեամբը, համբերատար արիւթեամբը, դասակիցները գերազանցող խոհեմազարդ իմաստութեամբ, համեստագոյն բարքով, քահանայավայել կարգապահութեամբ, եւ աստուածային եւ եկեղեցական օրինաց նախանձախնդիր եռանդով, անյողողդ հաւատքով, անսասան՝ անդրդուելի յուսով, եւ վերջապէս անսպառ՝ աստուածավառ սիրով, անսպառում հիացմամբ պիտի յափըռտակէր իրեն՝ Բրիտտոսի բարի եւ աստուածավախ հաւատացեալները եւ ընդհանուր եկեղեցականութեան մաքրակենցաղ դասը, հանդիսանալով անոնց ամէնուն տիպար ճշմարիտ հաւատացեալ Կաթողիկէի եւ երկիւղած ու առաքինազարդ Քահանայութեան:

Տէր Կոմիտաս Քահանան՝ քաջ եւ արի զինուոր եղաւ Քրիստոսի զօրապետին «Մարտիր զբաւուր մարտն հաւատոց, եւ բուռն հաւ զկենացն յաւիտեականաց յոր կոչեցաւ» (Ա. Տիմ. 2. 6. 8. 10. 11.): Նա Մովսէս մը եղած էր իրեն յանձնուած ժողովուրդը տաղտկալի նեղութեանց եգիպտոսէն հանելու եւ վշտաց ու ցաւոց Կարմիր ծովէն անցընելու, եւ Աստուծոյ սուրբ կամաց հասկերպութեամբ, անյաշող բախտերու անապատներուն մէջ առաջնորդելով ներքին մը խիթարութեամբ Աւետեաց երկիրներուն մէջ տեղաւորելու, եւ իւր բարի եւ անսայթաք վարուց կենդանի օրինակով իրեն յանձնուած հօռթ առ Աստուած ուղղելու ջանանար կը լինէր: Նա՝ իրիւր քաջ զինուոր, հաւատոյ պատերազմի դաշտին մէջ մինչեւ ցվերջ կուրծք տալով, ուրախ եւ անվրդով սրտիւ հեղիւ իւր սուրբ արիւնը, երկինք պըցաւ՝ յաղթութեան դափնիին ետեւէն, յաւիտեական Զօրազլխէն ընդունելու համար այն փառաւոր եւ անթառամ պսակը որ պատրաստուած է Ս. Հաւատոյ Ախոյեաններուն:

Ահաւասիկ այս է Կաթողիկէ Ս. Կրօնքին

պահանջած Հաւատացեալն ալ, եկեղեցականն ալ:

Ի հեճուկս դժոխային սադրանաց, եւ կրօնքի թշնամեաց՝ Տէր Կոմիտասի եւ իր հետեւող Կաթողիկէից անձին վրայ ստուգուեցաւ ակնյայտի՝ յաշտի եղերաց, օրէնստանոյց Գամաղիէլի այն նշանաւոր պատգամը թէ՝ «Ապա քե յԱսուծոյ, ոչ կարեմք քեզ զդոսպ. գուցէ եւ Ասուծամարտք գտնիցի» (Գործ. Ե. 39.): Յիշատի Երանելի Տէր Կոմիտաս Քահանային սորվեցուցած վարդապետութեանց, Թանկագին բարեմասնութեանց աստուածատուր տաղանդին եւ հաստատամտութեամբ պաշտպանած դատին յաշողութեան արդիւնքն է որ Ուղղափառ Ս. Կրօնքը, յԱրեւելս անթիւ քաղաքներու եւ գաւառներու մէջ, եւ նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ անհաւատալի կերպով փայլեցաւ, ծաւալեցաւ եւ հաստատուն արմատներ արձակեց: Իւր սուրբ արեան մէն մի կաթիլը ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն, եւ ընդ միոյ հարիւր պտուղներ յառաջ բերաւ. վասն զի միշտ ճշմարիտ է Տերառողիանոսի այն խօսքը թէ՝ «Արիւն Մարտիրոսաց, սերմն Քրիստոսեցի» է:

Մեր ներկայ ժամանակուան մէջ սակայն չար եւ ոխերիմ թշնամի ոգւոյն՝ Ուղղափառ Ս. Կրօնքին դէմ յարուցած պայքարն յիշրաւի աղէտալի է. սոսկալի որոմ մը ցանուած է, եւ այս որումը, ուրիշ բան չէ եթէ ո'չ արդիականութեան հոգին, այսինքն՝ ազատամտութիւն, ազատախոհութիւն, իշխանութիւնէ ազատագրում, որ սպրդած է եւ ամէն տեղ ահադին կործանումներ կը գործէ, գաղտնի մեքենայութեամբ կրօնական անտարբերութեան, պաշտպանուած՝ քաղաքակիրթ դարու պիղծ իմաստակութենէն:

Պէտք է որ՝ Հաւատացեալք ու եկեղեցականք ձեռք ձեռքի տալով, աշխատին նախ անձանց սրբութեան, ապա սուրբ Կաթողիկէ հաւատքին անարատ պահպանութեան եւ ծաւալումին, որոց համար փառապանծ Նահատակն Քրիստոսի, Երանելի Տ. Կոմիտաս Քահանայ, իր արիւնը թափեց եւ այսպէսով Հրոմայ Ս. Գահին, Քրիստոսի Փոխանորդ եւ

Ս. Պետրոսի Առաքելապետի յաջորդ՝ Ս. Քա-
հանայապետին հշու եւ անպայման հպատա-
կութեան սրբազան ժառանգութիւնը թողուց
մեզ, որպէսզի անբաժանելի կերպով մնանք
մի եւ ընդհանրական Ս. Եկեղեցւոյ ծոցին
մէջ հաւատարիմ զաւակներ, ի փառս Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ի փրկութիւն
մեր հոգիներուն:

(Շարունակելի)



- 1.— Շարժէ՛, գրի՛չ իմ, շարժէ՛.
Շարէ՛ խորհուրդ նեմարիս,
Մտի՛ ծովու մարգարիս,
Որ անթառամ փառք կ'արժէ:
- 2.— Գրի՛չ, սիրոյն երկնային
Ըզեց տուեր եմ նուէր.
Երկրի կիբեր վառուէր
Ի գուր քեզի կր նային:
- 3.— Սիրոյն մաքուր եւ անեղ
Երգերն հիւսէ՛ բերկրաւէս,
Որ կը տեսն առ յաւէս
Երանելաց երկրին մէջ:
- 4.— Անցի՛ր մէջէն բարեբու.
Չարին արմատն ա՛ն, հոսէ՛.
Հասու սայրովդ ակօսէ՛,
Ցանկ' բարին կենսասու:
- 5.— Վրնիս ցովքեր փայլակե՛ն,
Հրպումներդ լուսայոյզ,
Խաւարն քնեն հեռասոյզ
Թշուառներու հոգեակէն:
- 6.— Մի՛ կանգ առնուր բընաին,
Մտիդ գեղուն, յորդ ակէն.
Թո՛ղ վստկներ կայլակեն,
Չովացնեն ծարաւին:
- 7.— Շարժէ՛, գրի՛չ իմ, շարժէ՛.
Մեր կերտէ՛ նեմարիս,
Մտի՛ ծովու մարգարիս,
Որ երկնային կեանք կ'արժէ:

ԽԱՉԻՆ Վ. ԱԹԱՆԱՆԵԱՆ

Մ Ա Լ Թ Ա Յ Ի ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար.)

Կարդինալ-Պատուիրակին ճառէն վերջը,
Արհի. Բէյա Մալթայի Եպսկ.ը շնորհակալու-
թիւն յայտնեց Միքանաւորին և ներկայ ե-
ղողներուն. նոյնպէս Մալթայի Կղզեցւոց կող-
մանէ Կոմս Մաթթէի բարի գալուստ մաղ-
թեց ամենուն: Այլեւայլ ճառեր ալ խօսուե-
ցան. և Ս. Հաղորդութեան օրհնութեամբ
աւարտեցաւ բացման արարողութիւնը:

Հետեւեալ օրը Կարդինալներն այլեւայլ
Եկեղեցիներու մէջ հանդիսաւոր պատարագ
ընելով Ս. Հաղորդութիւնը բաշխեցին: Այն
օրը Գաղինոյի առջեւի Րէճինա հրապարակին
վրայ կատարուեցաւ Մալթայի երիտասարդ-
ներուն անցքը: Հրապարակը լեցուած էր
խուռն բազմութեամբ: Կարդինալ-Պատուի-
րակը Գաղինոյի միժ պատշգամբին վրայ երեւ-
ցաւ բազմութիւն Եպսկ.ներով և իր հետե-
ւորդներով, որոնց մէջ կար նաեւ Նորֆոլքի
Դուքսը՝ Անգլիոյ առաջին Լորտը, որ այն
առաւօտ հասեր էր: Շքեղ եղաւ անցքը, որ
մէկ ժամէն աւելի տեւեց. երիտասարդները
ցնծալից կը ճօճեցնէին իրենց գլխարկները և
խանդավառ կը ծափահարէին Ս. Քահանայա-
պետին Պատուիրակը, իրենց Հօրը ներկայա-
ցուցիչը. և Կարդինալ Ֆէրրաթա այս սրը-
տաշարժ տեսարանէն յուզուած՝ կ'օրհնէր զի-
րենք:

Կարդինալ-Պատուիրակը առջի օր սապէս
հեռագրած էր Ս. Քահանայապետին:

ԱՌ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՆ ՊԻՍՍ Ժ,

Փառաւորապէս իշխող

Հ Ռ Ո Վ Մ

Մայրա, 23.— Ս. Պօղոս Առաքելապետի ա-
ւետարանում այս նշանաւոր Կղզիէն, Ս. Հա-
ղորդութեան միջազգային Համաժողովն, որուն
փայլը կ'աւելցնէ ներկայութիւնը հինգ Վսեմ. Մի-
րանաւորներու, վարսուն Արքեպս.աց և Եպիս-
կոպոսաց, եւ զոտ Մայրացի Ժողովուրդը Քր-
իստոնեական անկախագրեղի խանդավառու-
թեամբ հիւրասիրեց, իր առաջին մտածութիւնը

կը դարձնէ առ Ձեզ, ո՛վ Ամենեւրանեայ Հայր, մեծ Քահանայապետ Ս. Հաղորդութեան. կը դառնան առ Ձեզ, սէր, որդիական մեծարանք յարգութիւն, հնազանդութիւն. եռանդագին կը մտնէ Ձեզ երկար ու երջանիկ կեանք. շնորհակալ կ'ըլլայ Ձեզ որ հաճեցաք Կարդինալ Պատրիարկ մը զրկել որ Ձեր Օգոստիանոս անունով նախագահէ իր հանդիսաւոր գումարումին: Համաժողովի անդամներն որ հոս դիմած են անկէ ազգերէն, եւ որոնք սերտ միացած են ի Ս. Հաղորդութեան իրապէս ներկայ գրեւոր Յիսուսի հաւատքին ու սիրոյն մէջ, կը հայցեն իր յրաւել հոնց ցնծութեան եւ իր ապահով առհասարակ գրաւական յարգութեան, Ձեր հայրական Առաքելական Օրհնութիւնը իրենց անձանց ու աշխատանք վրայ:

ԴՈՄԻՆԻԿԱՆՍ Կարդ. ՖԵՐՐԱՐԱ

Այն առաւօտ 24 Ապրիլ, Նորին Սրբութիւնը կը հաճէր պատասխանելու այսպէս.

Առ Կարդինալ Ֆերրարա,
ԻԱՆԱՆԱՅԱՊԱՏԱՊԱՏԱՅԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ

Օգոստիանոս Քահանայապետն Պիոս Ժ. հայրագործով արտով կ'ընդունէ՝ իր այնչափ գաւազաններն եռանդագին ձայնիւ արձագանգը, որոնք իրենց սիրայիւր մեծութիւնն Անոր դարձնելով, կրօնական աւանդութիւններով իրապէս անսխալական այդ Կղզոյն մէջ կը ձեռնարկեն Գոհութեան խորհրդոյն մեծ արարողութիւններուն. եւ անոնց հետ միասնաբար միեւնոյն մեծութիւն մէջ՝ խորին երկրպագութեան առաջի յարգանքով Յիսուսի ի Հաղորդութեան, կ'աղօթէ Աստուծոյ որ անկեղծ մէջ քաջաւորէ իր սիրովը. եւ իր գրաւական երկնից ընտելացոյն շնորհներուն, առասպելէ կ'առաքէ խնդրած Առաքելական Օրհնութիւնը, Համաժողովի իւրաքանչիւր անդամին, մանաւանդ Ձեր Վսեմութեան, եւ միւս ներկայ Կարդինալներուն, Արքեպիսկոպոսներուն եւ Եպիսկոպոսներուն:

Կարդ. ՄԵՐԻ ՏԵՂ ՎԱԼ

Այն օրը հասան նաեւ երկու ուրիշ Կարդինալներ՝ Անգղիոյ Նախագահ Արքեպիսկոպոսն՝ Կարդինալ Պէօրն, եւ Կարդինալ Ալմա-թարի Սանդոս, Սպանիայէն:

Համաժողովին երեք օրերը անցան մաս-

նակի ու հանդիսաւոր գումարումներով, որոնց մէջ խօսեցան Եպիսկոպոսներ, աշխարհականներ, ինչպէս Նորֆոլքի Դուքսը. Յնգղիոյ Նախագահ եւ Լոնտոնի մէջ Ուէսթմինսթրի Արքեպիս. Կարդինալ Պէօրնի ճառը, որ նիւթ ունէր «Ս. Հաղորդութիւն եւ Ընթանիք» արտաքին կարգի ծափահարուեցաւ. Նոյնպէս շատ սրտաշարժ էր Հ. Ճիւմէլլիի ճառը՝ որ խօսեցաւ Ս. Հաղորդութեան եւ Լուսի վրայ:

Կարդինալները ամէն օր այլեւայլ Եկեղեցիներու մէջ հանդիսաւոր Պատարագներ կը մատուցանէին: Համաժողովին երրորդ օրը Համալսարաններու բոլոր աշակերտներն առանց եւ ոչ մի բացառութեան եւ «Մարիամու Դսեմք» գեղեցիկ անունը կրող օրհորդներ եւ հազարաւոր մանուկներ մօտեցան Ս. Սեղանին եւ հաղորդուեցան:

Ապրիլ 26ին կատարուեցաւ Համաժողովին փակումը, որուն մէջ վերջին անգամ խօսեցաւ Կարդինալ-Պատուիրակը, իր շնորհակալութիւնները մատուցանելով ներկայ Կարդինալներուն, Եպիսկոպոսներուն եւ Ուխտաւորներուն, մանաւանդ Կղզեցւոց, որոնք պատիւ ըրին իրենց Հաւատքին եւ իրենց պաշտպան Ս. Պօղոս Առաքելոյն: Նոյնպէս մասնաւորապէս շնորհակալութիւն յայտնեց Կղզւոյն Իշխանութիւններուն, Կառավարչին, որոնք ամէնքը իրենց Վեհապետը կը ներկայացնեն:

Ի մասնաւորի ուղղեց իր շնորհակալութիւնը առ Նորին Շնորհազարդ Բարձրութիւն՝ Դուքսըն Նորֆոլքի որ փառք ու պարծանք է անգղիացի Կաթողիկէներուն, որ իր ներկայութեամբ, իր բարեպաշտութեամբ եւ եռանդով՝ փայլ աւելցուց Համաժողովին:

Ի հոսկին, բաժնուելէն, հրաժեշտի ողջոյնը տալէ առաջ, կը յորդորէ զամէնքը որպէսզի՝ Համաժողովն արդիւնաւոր գործելու համար, միշտ գործնական սէրը պահպանեն առ Ամենասուրբ Հաղորդութիւն, յաճախակի մօտենալով անոր, եւ երբեք զանց չընելով այցելութիւնն առ Յիսուս որ փակուած Տապանակի մէջ միշտ կը սպասէ մեզի:

Ծափահարութեանց շփոթին մէջ, Համաժողովին Մալթայի կարգադիր Յանճնախումբը

Կարդինալ-Պատուիրակին կը ներկայացնեն Մալթացիներու ընծայն, որ էր գոհարազարդ ոսկի սկիւն մը, որ պատկանած էր նոյն Կրղզ-ւոյն հին Եպսկոպոսին մէկուն: Այս աղնը-ւութենէն յոյժ զգածուեցաւ Միրանաւորը:

Սրտաշարժ արարողութիւն մըն էր հե-տեւեալը: Քաղքին գլխաւոր հաստատու-թեանը մէջ բոլոր աղքատաց հաց ու դրամ բաշխելէ վերջը, վաթսուն աղքատ՝ ճերմակ գոգնոցներով, նստեցուցին շքեղ սեղանի մը առջեւ ճաշի, և ծառայեցին Եպսկոպոսներ, ի գլուխ ունենալով Արքեպիսկոպոս Կրաս-սէլի (հին Ք. Նուիրակ ի Կ. Պոլիս), Կա-նոնիկոսներ, Իշխանուհիք և Աւագորեալ: Արքեպս. Կրասսէլի համառօտ ճառ մը խօ-սեցաւ, լերան վրայ Յիսուսին Հացը բազմա-ցնելու հրաշքին վրայ. աղքատները կը ծա-փահարէին . . . :

(Շարունակելի)

ԼՈՒՏԵՐ ԵՒ ՊԱՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ

